

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.
վայրը _____, այսուհետ՝
երաշխիք տվող կազմակերպության անվանումը
«Երաշխիք տվող», ի դեմս _____, որը գործում է _____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա մի կողմից, և _____, այսուհետ՝ «Պրինցիպալ»
երաշխիք ստացող կազմակերպության անվանումը
(երաշխիք ստացող), ի դեմս _____, որը գործում է _____
պաշտոնը, ազգանունը, անունը
հիման վրա՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Երաշխիք տվողը երաշխիք է տալիս Պրինցիպալի և _____,

կապալառու կազմակերպության անվանումը
այսուհետ՝ «Կապալառու» միջև _____ թ. կնքված կապալի թիվ _____ պայմանագրի _____
կետերով Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ կատարման և Կապալառուին երաշխիքի գումարը վճարելու համար այն դեպքում, եթե Պրինցիպալը (երաշխիք ստացողը) անվճարումակության կամ այլ պատճառներով չկարողանա պատշաճ կատարել նշված պարտավորությունները:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Երաշխիք տվողը պարտավորվում է՝

2.1.1. սույն պայմանագրի 2.2.1 կետում նշված կոմիսիոն վարձատրությունը Երաշխավորի հաշվարկային հաշվին ստացվելու օրվանից _____ օրվա ընթացքում Կապալառուին հանձնել Պրինցիպալի համար գրավոր երաշխիք (այսուհետ՝ «Երաշխիք»)՝ _____ (_____) գումարով:

Կապալառուին վճարելու պարտավորությամբ, եթե Պրինցիպալը (երաշխիք ստացողը) անվճարումակության կամ այլ պատճառներով չկարողանա պատշաճ կատարել Կապալի պայմանագրի _____ կետերով սահմանված պարտավորությունները:

Երաշխիքի գումարը վճարվում է Երաշխիքը կատարելու վերաբերյալ Կապալառուի գրավոր պահանջը (այսուհետ՝ «Պահանջ») Երաշխիք տվողի կողմից ստանալուց հետո՝ _____ օրվա ընթացքում: Պահանջի հետ միասին Կապալառուին պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել պատշաճ ձևակերպված հետևյալ փաստաթղթերը՝

Երաշխիք պարտավորությունները կատարելուց հետո Երաշխիք տվողը Պրինցիպալին ձևակերպում է վարկ, երաշխիքի գումարի չափով՝ _____ ժամկետով, տարեկան _____ տոկոսով:

2.1.2. Պահանջն ստանալուց հետո՝ _____ օրվա ընթացքում, այդ մասին գրավոր տեղեկացնելով Պրինցիպալին:

2.1.3. Կապալառուին Երաշխիքի գումարը վճարելուց հետո՝ _____ օրվա ընթացքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Կազմակերպությանը:

2.1.4. Երաշխիքը կատարելուց հետո՝ _____ օրվա ընթացքում, Պրինցիպալի հետ վարել բանակցություններ՝ վերջինիս՝ սույն պայմանագրի 2.1 կետում նշված պայմաններով հատկացվող վարկը ձևակերպելու համար:

2.1.5. Երաշխիքը տրվում է _____ օր ժամկետով:

2.2. Պրինցիպալը պարտավորվում է՝

2.2.1. Երաշխիք տվողին վճարել Կոմիսիոն վարձատրություն՝ երաշխիքի գումարի _____ տոկոսի չափով:

2.2.2. Կապալառուի պահանջն ստանալու վերաբերյալ Երաշխիք տվողի հաղորդման դեպքում վերջինիս ներկայացնել Երաշխիքի կատարման անհրաժեշտությունն առաջացնող վիճակը և պատճառները բացատրող տեղեկատվություն ու փաստաթղթեր:

2.2.3. մարել Երաշխիք տվողի կողմից հատկացված վարկը՝ սույն Պայմանագրի 2.1.1 կետում նշված պայմաններով:

3. Պայմանագրի փոփոխումը և դադարումը

Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները համաձայնեցվում են Կողմերի միջև և ձևակերպվում են Պայմանագրին կից առանձին հավելվածներով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով Պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը կրում են նյութական պատասխանատվություն՝ գործող օրենսդրության համաձայն:

4.2. Եթե Երաշխիք տվողը Պրինցիպալին վարկ ձևակերպելու և այն մարելու համար սահմանված ժամկետը խախտում է, ապա Երաշխիք տվողը պարտավոր է Պրինցիպալին վճարել տուժավճար՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վարկի գումարի _____ տոկոսի չափով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

5.2. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Կապալի Պայմանագրի _____ կետերով Պրինցիպալի պարտավորությունների կատարման ավարտից հետո:

բ) Կապալի Պայմանագրի _____ կետերով իր պարտավորությունները Պրինցիպալի կողմից այլ կազմակերպությանը փոխանցելու (վերազիջելու) դեպքում:

գ) Երաշխիքի կատարման դեպքում՝ Կողմերի միջև փոխադարձ հաշվարկն ավարտելուց հետո:

6. Այլ պայմաններ

- 6.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
- 6.2. Սույն Պայմանագրին կից բոլոր հավելվածները և լրացումները դրա անբաժանելի մասն են:
- 6.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<i>Երաշխիք տվող</i>	<i>Պրինցիպալ</i>
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն